ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Ալիկ Ալոյանը, Մանուկ Բաղդասարյանը, Արամ Հովսեփյանը, Գարեգին Մարգարյանը, Ժորա Մարտիրոսյանը, Արամ Մկրտչյանը, Արսեն Ստեփանյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադեվոսյանը

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 159-Ա/

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 162-Ա/

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143 -րդ հոդվածի պահանջներով. ***Գառնի համայնքի ավագանին որոշում է.***

1. «ՌՈԶ ԱՐՏ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գողթ գյուղի 07-026-0105-0088 կադաստրային համարի 0.5635 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող, արոտավայր հողատեսքը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ ջերմոց, կառուցման նպատակով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 164-Ա/

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 179-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հաստատել ստորև նշված ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝

1) «Գառնի համայնքում խաղահրապարակի կառուցում»,

2) «Գառնի համայնքի Գողթ բնակավայրի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի շենքի կառուցում»,

3) «Գառնի համայնքում խմելու ջրի խողովակների անցկացում»:

4) «Գառնի համայնքի Գեղարդ բնակավայրի խմելու ջրագծի և ռեզերվուարի կառուցում»:

2. Սահմանել, որ վերոնշյալ ծրագրերի իրականացման և համայնքային ներդրում կատարելու համար համայնքի 2025 թվականի բյուջեով ֆինանսական միջոցներ նախատեսվում են հետևյալ չափերով՝

1) « Գառնի համայնքում խաղահրապարակի կառուցում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 70 տոկոսը,

2) « Գառնի համայնքի Գողթ բնակավայրի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոնի շենքի կառուցում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 65 տոկոսը,

3) « Գառնի համայնքում խմելու ջրի խողովակների անցկացում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 35 տոկոսը,

4) «Գառնի համայնքի Գեղարդ բնակավայրի խմելու ջրագծի և ռեզերվուարի կառուցում» ծրագրի համար՝ նախատեսված ծախսերի 35 տոկոսը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 180-Ա/

Ավագանու անդամներ

ՀՄԱՅԱԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԻՐԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՏԻՐԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Լիպարիտ Թադեվոսյանը

_____